

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ  Ռ. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային  
պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

16 փետրվար 2018 թվական

**ԿԱՆՈՆՆԵՐ**

**ՈՒՍԱՆՈՂԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ**

## **1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1.Ուսանողների կարգապահական կանոնները կանոնակարգում են վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կարգապահական կանոնները խախտելու հետ կապված գործողությունները:

1.2.Սույն կանոնների համար հիմք են հանդիսանում քոլեջի կանոնադրությունը, ուսանողի հետ կնքած պայմանագիրը և լիազոր մարմնի կողմից տրված հրամանները:

## **2.ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1. Քոլեջի ուսանողը իրավունք ունի՝

1) ընտրել տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր (էլեկտիվ) և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթացներ, որոնք տրամադրում է Քոլեջը,

2) մասնակցել Քոլեջի կառավարմանը՝ ընդգրկվելով Խորհրդի կազմում, մասնակցել ուսանողական խորհրդի, խմբակների, ակումբների ստեղծմանը և դրանց աշխատանքներին,

3) մասնակցել իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները,

4) ստանալ կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, և ձեռք բերելու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ,

5) վճարովի հիմունքով ստանալու երկրորդ մասնագիտություն կամ օգտվելու լրացուցիչ (այդ թվում՝ վճարովի) կրթական ծառայություններից,

6) սահմանված կարգով վճարովի ուսուցման համակարգից փոխադրվել անվճար ուսուցման համակարգ և հակառակը,

7) սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում ստանալ ակադեմիական արձակուրդ

8) անվճար օգտվել քոլեջի գրադարանից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

9) մասնակցել Քոլեջի հետազոտական, նախագծային աշխատանքների կատարմանը,

10) ստանալ ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ուսանողական նպաստ և կրթաթոշակ:

2.2. Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ ուսումնառող և կրթաթոշակ ստացող ուսանողները ակադեմիական արձակուրդից վերադառնալուց հետո վերականգնվում են ուսուցման նույն համակարգում:

2.3. Քոլեջի ուսանողը և դիմորդն իրավունք ունի ծանոթանալ Քոլեջի լիցենզիային և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին /առկայության դեպքում/:

2.4. Քոլեջի ուսանողը պարտավոր է՝

1) կատարել Քոլեջի կանոնադրության իրեն վերաբերող պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները,

2) պարտադիր հաճախել ուսումնական պլանով նախատեսված պարապմունքներին և սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթները,

3) խնամքով վերաբերվել Քոլեջի գույքին՝ վնաս պատճառելու դեպքում հատուցել նյութական վնասը,

4) հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը,

5) վճարովի հիմունքներով սովորելիս սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը,

6) կատարել կրթական ծրագրերի պահանջները,

7) հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին,

8) բարձր պահել Քոլեջի ուսանողի պատիվն ու հեղինակությունը,

9) պահպանել հասարակության բարոյական նորմերը,

10) անկախ ուսումնառության ընդհատման պատճառից՝ մարել ուսման վարձի և/կամ գրադարանի պարտքը,

2.5. Կիսամյակի ընթացքում 80 ժամ անհարգելի բացակայություն ունեցող (անվճար և վճարովի համակարգում սովորող) ուսանողին տրվում է նկատողություն, 100 ժամի դեպքում՝ խիստ նկատողություն, իսկ 120 ժամ անհարգելի բացակայություն ունեցող

ուսանողի հետ Քոլեջն իրավունք ունի միակողմանիորեն լուծել պայմանագիրը և  
ուսանողին հեռացնել Քոլեջից:

Կոտայքի տարածաշրջանային պետական բոլորակուսյան



Գ. Գևորգյան